

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹՅՈՒՆ 618

Պուշկարիոյ համար սենյակի կան 10 ֆրանկ. Վերջինս սենյակի 5 ֆրանկ. Արտատպանի համար սարկիսան 12 ֆրանկ, վնասակար 6 ֆր.

ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Կրօնքիտի և ս յն տրուիր:

Իրանուցանակ տողը 20 սանկրիտ և:

ՇԱՐԺԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՒԲ ԾԱՌԹԻ ԵՒ ԾԱՌԱԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Ն. մակ և Գրամ Գրիկոյ
Խմբագրութեան հասցիին.

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна.

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgrie).

(Autheker)
Blomart
W. 4

ՉԱՐԻՔԻՆ ՍԷՋ ԲԱՐԻՔ

Պատրիարքարանի պաշտօնական լուրերը, Պուլի Աղբ. լուրերուն մէջ, ամէն օր ճոխացած են Արմաշու վանքի արեղաներուն անուններովը: Իզմիտի շոգենաւր ամէն շաբթու. Պուլիս կը թափէ զանոնք, և Պատրիարքարանը գաւառները կը զրկէ այս անփորձ արեղաները:

Պէտք է մտնել ամենէն առաջ ըսել թէ նորընծայ վարդապետները կրնան գիտցած ըլլալ լեզուներ, կրօնքի անհամ ու ծթած պատմութիւններ, և թերեւս անոնցմէ մէկ քանին գալիքին մէջ ըլլան արժանիքի տէր հոգեւորականներ, և սակայն ուրիշ բան է գաւառական առաջնորդութիւնը, ուրիշ բան է գիրքերու ծանօթութիւնը: Եւ, բարեբախտաբար, այնչափ տխմար ալ չունինք, որ հաւատայ թէ առջի օրուան տիրացուն մէկ օր ետքը գլխուն վրայ դնելով վեղարը՝ գաւառական պաշտօններ վարելու չափ ձեռնհաս մէկը եղած կըլլայ: Եւ եթէ գաւառական առաջնորդութիւնները այդչափ թեթեւ բաներ են, աւելի լաւ է այդ արեղաները թարթափեցնել վանքին մութին մէջ իրենց գրական զբաղումներովը, քան թէ զրկել հեռաւոր անկիւններ՝ ուր աշխարհիկ կեանքը, սատանայի երկայն սողներով, կըրնայ անոնց քնքուշ հոգիները աղմուկ կեանքի զուարթ գարունին մէջ:

Իմ կարծիքով, ատոնք մէկ բան մը միայն կրնան արժել իրենց գաւառական պաշտօններուն մէջ, — պարզապէս գործիք ըլլալ Պատրիարքարանի և, ամենախոնարհ հպատակութեամբ, խաչ հոնել Պատրիարքի անուանը: Այսպէս, եթէ եզուտի խաչ մը չէ, անկէց ալ տարբեր բան մը չէ անոնց պաշտօնավարութիւնը: Ի՞նչ կը նշանակէ հապա եպիսկոպոսներ, վարդապետներ Պուլի թաղերուն մէջ դեպքերին, հարուստ մեռելներուն դազալին ետեւէն երթան փարիսե-

ցիներու սուգով, ու անդին, վորձառութեան մեծ շունչի, նոր կեանքի կարօտ գաւառներուն մէջ լեցնել անփորձ արեղաներ: Հոգեւորական այս շարիքին մէջ եթէ դաս մը կայ, ազգին շահեկան դաս մը, սա է անշուշտ թէ ալ հասկնալու ենք որ այդ անսիրտ մարդոց մէջ ի զուր սիրտ կը փնտռենք մենք, ատոնք եսասէրներ են, սարսափելի եսասէրներ, ունեւոր դուռներուն ակնածոտ, գաղտնի սէրերու տարփածու և հոգիով փարիսեցի: Եւ պէտք էր մինչեւ այսօր հաւատարի ըլլայինք թէ գաւառական առաջնորդութեան վախճող վարդապետի մը կամ եպիսկոպոսի աչքին գաւառական հովուութեան շատ աւելի թանկ արժէք ունեցաւ կնոջ մը շրջազգեստին աղտոտ քղանցքը. ու լռելիայն մեր վրայ խնդացին՝ կծկտած և կեղեցիներու սենեակները ու ընդլայնուած մութին մէջ սուղիպոտը ճանկերով:

Պատրիարքարանը մեզի գաս կուտայ այսօր, շանանք օգտուիլ անկէ. ու ըսենք որ եթէ արեղաները մեզի, մեր առաջնորդական պէտքերուն ձեռնհաս կը համարիք, թող ձեզի ըլլայ առաջնորդութիւնը, ու գլխունուսձարը անանք: Եւ իրաւ ցընէ այս վերջին գասը մեզի շահեկան կըլլայ. և այնուհետեւ պէտք չպիտի ունենանք, տխմարօրէն, հայրենիքի, ընտանիքի ու պաղայի խնդիրները դնելու այնպիսի ձեռքերու մէջ՝ որոնք լեցուն են աղտեղութիւններով: Եւ ինչո՞ւ մոռնանք: Երբ գաւառներու մէջ, արիւնի և սարսափի օրերուն, աշխարհական հոգեւորականութիւնը գառնուկի պէս վիզը դրաւ թշնամի սուրբու տակ, եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, ծայրագոյններ, թեթեւականներ, Պուլի թաղերէ անբաժան, մեզի քարոզիչ եղան, հարսնեւոր եղան, դազալներու ետեւէ սղակիր եղան: Եւ շատ զարմանալի պիտի ըլլայ, այսչափ փորձերէ ետքը, յոյս գնել վեղարներու սղաքին և սատանի քղանցք մը համբուրելու մտե-

նալ: Եթէ օգտուեցանք, լաւ, շարիքին մէջ չսպասուած բարիքը կըլլայ մեզի:

ՇԱՆԱՍՊ

ԿԸՂԱՄ ՏԵՍՆԵԼ

Երբ երկնիսն օրից ու պայծառ Լոյսի խորձեր քափքիին վար, Եւ ինքզեք ժպտով մ'ոնհուն Սիրոյ ողջոյն զայ տրուուն:

Երբ նագելի կոյսն անուշիկ Իւշահն ժողովե քոյս ու ծաղիկ, Թոյնունկերու այն անուշոյուն Բոյնեք երգով օղբ լնուն:

Կրդաւ յետեւ այդ ժամուն գեղ Կուսիւն, քոյսիւն հեռ միւստեղ նաեւ հոն վեր քրիս վրայ Հայուն զրօշ որ խոնիս ծփայ:

Լուսնի այդ շոյերն անքիւ Երբ գիշերը հոսիւն մեղմիւ Նիւրիք սպիւն հեռ հակադարձիկ Գրուե դաշտ, քոյս, քիթն ծաղիկ,

Երբ քոյնիսն հեռ որ իր քոյնիսն Թոյն յանձնեղ հուսկ մեղեղիս նախուն կոյսն ալ-զարդն այն կեանքի Երբայ օրեղ յերազակիս:

Ո՛հ, գիշերուսն այդ հեռ ժամուն Կրդաւ հսկից ևս միշտ արբուն Եւ նշարեղ քրիս վրայ Ստուեր զրօշիս որ միշտ ծփայ: ԿԱՄԵՐ-ԱՐՇԱԻԻՐ

ԱՐՁԱԳԱՆԳ

Հայր Եւրոպայի աղեկտուր նամակը կարգացիք: Նողկանքի և անէքներու ուսմը մըն է զոր կարձակէ անզգայ Եւրոպայի երեսին: Հայաստան սովատանջ է. անուշի սոսմին վերջին արարուածն է որ կը պարզուի: Հալածանքի, ջարդերու, կողոպուտի տեսարաններէն ետքը դահիճ հեղինակ մը ի՞նչ աւելի ազդեցիկ վերջաբան կրնար գտնել իր խողին քան թէ վարագոյրը բանալով սովատանջ թշուառութիւնը պատկերացնել իր բոլոր արհաւիրքներով, քաղաքակրթեալ մարդակերներու ծափերը խելու համար:

Ձրանսացի հոգեւորականին գրութիւնը այլպէս ճիւղալային, քստմընելի պարագայ մը ի վեր կը հանէ, սիրող թշուառութեան պէս անօրինակ: Հոն, Հայաստանի մէջ, մարդասէրները կը վարուին ինչպէս հրդեհի պահուն շուրթած տան ու տէր մը՝ որ ձեռքը եկած քանի մը թանկապին իրեղենները միայն կը փրկէ, միւսները բոցին շնորհելով: Հիւան-

զը, նօթին, մերկը ստոյգ մահուան կը շնորհէ մարդասիրութիւնը, փորձ մը ընելով միայն փրկել այն մասը որ զեռ կենդանութեան կայծ մը կը ցուցնէ իր երակներուն մէջ:

Հայաստանի մէջ սով, գաղթապարբերու մէջ անստոյգ վիճակ: Պահ մը կարծուեցաւ թէ խառութիւնները մեղմացած էին եւ թէ քանի մը հանգուրժելի ձեւակերպութիւններով կարելի էր ծննդաւայր դառնալ: Սխալ, գէթ վերջին զրոյցները այդպէս կարծել կուտան: Կը հաւատանք թէ Պուլիս մեկնողներէն անոնք որ քիչ շատ մտաւոր կամ ֆիզիքական ուժ են, վտանգաւոր կը համարուին եւ հետեւապէս բանան է եղբ անոնց բաժինը: Հայը ուրեմն, Վոսփորի ափերը անանելու համար, տխմար կամ հիւժեալ ըլլալու պայմանը լրացնելու է թուրքին գաղափարով:

Իր սովորական վայրագութեան և ցեղային անհաշտ ստեղծութեան գառ, թուրքը երբ այսպէս խիստ կը վարուի հայերու հետ, կը կարծենք որ հաւանաբար հետեւեալ կերպով կը տրամաբանէ:

«Արդիկայ օտար ձեռքը բռնող և խոհուն հայ մըն է: Եթէ ի՞նչքը չէ միտած, գոնէ կողոպտուած է և կամ եթէ այս ալ չըլլայ, անպատճառ իր ազգակիցներուն, սրտակիցներուն մէջ մէկէ աւելիներ կը գտնուին սիրելի քրդերու ճոկանին տակ ինկած: Եւ յետոյ, ամէն օր, սկանտաես վկայ է թէ ինչպէս ես տեսակ տեսակ միջոցներով, սուբով, բանսով, սովով, կողոպուտով, և գեռ իրեն խելքէն միտքէն չանցած միջոցներով, հայուն ազգը կը փճացնեմ: Կարելի է ուրեմն որ այս հայը որ ապուշ մը ըլլալ չերեւար և մարմնապէս հուժկու է, զէնք կրնայ բռնել, կարելի է որ հոս միայն ապրուստ որոնելու գայ և ոչ թէ հաշիւ պահանջելու ինձմէ ըրածներու փոխարէն:»

Ինչէն գիտնայ թէ այդ ամբոխին մէջ յեղափոխական հիւլէ մըն ալ չը կայ, թէ հայուն մէջ ստուար դասակարգ մը գոյութիւն ունի սակաւին, որ հակառակ ամէն բանի, անկեղծօրէն պատրաստ է վերակենդանու եւ շարունակելու իր ծուծը անցած սարուկի հանգամանքը և թէ ինք ուրիշ գեր չէ կատարած բայց եթէ իր ստորէի կեանքէն անկամայ զորս սխալ ճգնուելու համար երկու հակառակ մարտիկներու պայքարին մէջտեղ:

Թուրքը կրնայ միտքէն անցնել թէ այսօրուան օրս անտարբեր, չէզոք հայ մը կրնայ գտնուիլ երկրագնտիս վրայ:

Եւ այս միջոցին, ի՞նչ կընէ մեր Օրմանեան Պատրիարքը: Հարսնիքները կը պարտի Օսմանիէ, Մէծիտիէ պատուանշաններով իր փառաւոր կուրծքը զարդարած: — Նայի՛մէ իշխանուհիին հարսնիքն է. բոլոր կըրօնական պետերը սեղանին շուրջը բոլորուած են: «Մընիւն» «Բլազան» զիններ ձէթով, աշխարհականներ մտով պատրաստուած համադամներ կուտան. ո՞վ սոսկալի կեղծիք եւ բարեպաշտութիւն: Մարդ այդ նկարագրութիւնը կարգալով, կը փորձուի ենթադրել թէ նոյն հոգեւորական պետերը սեղանէն ետքը, ըստ արեւելեան բարի սովորութեան, արդիօք անխաբար քատրի մըն ալ չեն դարձուցած, նոյն շարքով, այսինքն Օրմանեանը Ազգարանին հետ անկաժե եւ խախտման հետ վիզալի:

Եթէ բոլոր ասոնք զիւանագիտութիւն են, սնկակալիզական տեսակէն են, ուսկից միայն ստամոքսը կողտուի առանց բաժնի հանելու ո՞չ ուղտանջ Հայաստանի, ոչ ալ տառապող գաղթականներու:

ԿԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

ԱՐՏԱԿՈՂ ԵՒ ՍՊԱՌՈՂ

—)(—

Մեր կեանքի եւ պարտաւոր համար անհրաժեշտ եղող պիտոյքներու արտադրողին եւ սպառողին միջև կայ լայն անջրպետ մը, ընդարձակ ասպարէզ մը, զոր կը շահագործեն շարք մը դրամատէր — չահամու միջնորդներ: Այդ միջնորդները մենք սովորական լեզուով կը կոչենք վաճառականներ, որոնք ազգատիկ ընտանիքի մը պարէնն ըլլալու սահմանուած քիչ մը բրինձի վրայ իրենց վաճառականական իրաւունքէն դատ չեն մտնար նաեւ իրենց դրամա-

զլիւր տոկոսը բարդելու: Փողովորդան մը աղքատ դասակարգը, թէ՛ արտադրող եւ թէ՛ սպառող միւսնոյն փորձութիւններուն եւ հարստահարութիւններուն ենթարկուած է: Արտադրողն ստիպուած է աժան ծախել իր արտադրութիւնը, իսկ սպառողը միշտ սուղ կը գնէ իր սպառած նիւթը:

Գիւղացի երկրագործ մը իր արտադրած ցորենին ընտիրը ստիպուած է շուտ ծախել սրպէս զի կարենայ իր պարտքերը վճարել եւ կամ արգէն հնձելէ եւ կալելէ տաճ ծախած է զայն իր վախճառու պարտատիրոջ, ինք իր գործածութեան համար հաղիւ կարողանալով պահել իր արտադրութեան ստորինը:

Ասոնք որ կերպով մը յաջողած են հարստանալ եւ ձեռք տաք ու ճարձատուն վառարաններու մօտ ամառը զով ու հովասուն պարտէզներու մէջ կը բաժնուին, ընտիր ճերմակ հաց կը վախելն, մինչդեռ երկրագործը ձմրան ցուրտին ու փոքրին եւ ամառուան կիզիչ արեւին ներքեւ այրիլ տապալէ յետոյ գարի եւ մարացորեն միայն ունի:

Եւ աւոր պատճառը շատ պարզ է: Արտադրող եւ սպառող աղքատ դասակարգի կոնակին վրայ նստած են կարգ մը միջնորդներ, որոնց ամէն մէկը զրազած է իր աակինին գրպանները պարպելու. երեւակայել ուրեմն ամենուն ներքեւ մնացողին իր ճակի կացութիւնը:

Բայց թերեւ հարցնեն թէ ո՞վ է մեղաւորը — կը պատասխանենք. արտադրողին եւ սպառողին մէջ եղած անջրպետը եթէ կարելի ըլլայ վերացնել, ինքնին պիտի բարձրադասակարգութիւնը վերականգնուի, իր ճակատը անկախ այլեւս աւելի ստան պիտի սարի:

ՆԻՐԱՆ ԱՃԼՄԵՆ

—)(—

ՎԱՐՐ-ՊԱՏՐԻԱՐԿԻ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ (7)

Այս վերջինը, Միքայէլ Տէր Աւետիքեան, շատ խոնուն, բաւական զարգացած, չափազանց ընդունակ եւ համակրելի երիտասարդ էր. խեղճը իր նպատակին չհասաւ, իղձը փորի մէջ, արհեստը արդէն սովորած, մեռաւ Տուրքում: Կաթանեանը մասամբ նպատակին հասաւ եւ մի քանի զինագործներ, պատրաստեց իր արհեստանոցում, որոնք եւ իրանց արհեստը գործ: զրին հայկական յեղափոխութեան մէջ:

Այդ երկու երիտասարդները առաջին օրինակը առին Կովկասի ինտելիգենտ երիտասարդութեան, թողնել ամէն անպարէշ եւ գնալ զինագործութիւն սովորել, հայ յեղափոխականները զենք մատակարարելու համար:

Նոյնմեքի սկիզբներին պարոն Մ. ուսկի փոստի կառք նստեցինք եւ հեռագրանք այն վայրից, ուր տարիներով անվիւ ու գատտարակով էինք, ուր ստացել էինք զուտ հայկական ուսում եւ կրթութիւն. իրան լաւ ու վատ կողմերով, ուր ընտելացել էինք գաղափարական ձգտումների եւ մասամբ ըմբռնել ազգային կենսական պահանջները:

Ցուրտ ձմեռ էր. մենք շտապով, մեծ մեծ ծրարները կազմելով թըռչում էինք զէպի հայրենիք. ընկերս Դիլիջան, իսկ ես Աղէքսանդրապոլ: Ընկերս բոլորովին հանգիստ էր. նախ

որ ինքը մօտ 23 տարեկան էր, երկրորդ որ տան մեծը ինքն էր եւ ոչ ոք չէր կարող բարկանալ վրան: Ես էլ այնքան չէի մտածում. հայրս ինձ միշտ շատ էր սիրում, միշտ կատարում իմ քահանայութիւնը: Ծննդարանում եղածս միջոցին, ուր ձրի էի սպրում եւ սովորում, միշտ տարեկան մի քանի հարիւր ֆրանք ծախսում էր ինձ վրայ: Ես նրա գործերի մասին որոշ գաղափար չունէի, եւ համոզված էի որ հայրս կարող էր ինձ պահել իր հաշուով արքունական զպրոցում: Ինձ համար ամենակարեւորը նիւթական էր եւ այդ կողմից ինձ բոլորովին ապահով էի զգում: Մտքովս անգամ չէր կարող անցնել որ հայրս կարող էր բարկանալ վրաս եւ հակառակ լինել ուսումս շարունակելուն:

Սակայն, առանց ասում է «մարդը ենթադրում է, Աստուած կարողադրում», ինձ հետ ճիշդ այդպէս եղաւ: Հենց որ տուն հասայ, բոլոր ծրագրերս խորտակվեցին: Հայրս սաստիկ բարկացաւ, ազգականներ եւ բարեկամներ բոլորը միասին սկսեցին կշտամբել. կեանքս անտանելի դարձաւ. մի քանի անգամ հորիցս խնդրեցի ու զարկել ինձ ճիւղիս, սակայն ամէն ջանք ի գուր անցաւ: Հայրս անզրոգիւ էր իր բարկութեան մէջ:

Նա շատ յամառ եւ իր աստի մարդ լինելով միշտ հաստատ էր: ում իր խօսքին: Նա մերժում էր բացարձակապէս առանց ինձ յայտնելու որ իր

ՉՈՒՆԱՃԵԱՆ

—)(—

Վերջին հեռագրերը կը գուժեն համակրելի երաժշտական մահը: Չուհաճեան իզմիրի մէջ մեռած է, այն մահով որով մեռաւ Աղամեան, եւ որ կարծես ճակատագրային բաժինն է ամէն արուեստագէտի, — աղքատ:

Վէրտի այս փայլուն աշակերտը վառքի օրեր ալ տեսած է սակայն. եւ ամբողջ արեւելք մը օրրած իր մերթ զուարթ, յաճախ մեյամազձիկ կամ հեշտօրօր եւ միշտ գողտրիկ եղանակներով: Իր «Լէպլէպլի» հօրհօր աղան մեծ յաջողութիւն եւ ժողովրդականութիւն գտած է եւ ամենուն շրթերուն վրայ կը թրթռայ: Իր վերջին լուրջ գործն եղած է Չէմիրէն, այն սիրուն օրէնան որ այնքան խանդալից ընդունելութիւն մը գտաւ Պոլսոյ մէջ, նորանոր գափնիներ սփռելով վարպետին ճակտին: Եւ սակայն Չուհաճեանի ճիշդ այդ զաւակն է, «Չէմիրէն», որ իր հօրը վշտերուն պատճառ եղաւ, անառակ որդի մը պէս:

Օրին մէկը Չուհաճեան իր տեսակներով շուտոյ աշխարհը, Բարիզ գնաց: Եւ յապական համբաւ կը փնտռէր, ա՛լ նեղ զգալով իրեն համար Պոլսոյ միջնորդը: Բայց ֆրանսացին, որ տարուէ տարի իր բոլոր աճապարանները եւ միջակութիւնները իբր վառքի աստղեր մարտել կուսայ Պոլսեցիին, ֆրանսացին՝ Արեւելքը մը չհանդուրժեց իր բեմին վերայ: Չուհաճեան մերժուած էր,

ու այն օրէն բացուեցաւ իրեն համար նիւթական եւ բարոյական քայքայման թուական մը որ իր մահով վերջացաւ: Բայց մեզ համար է եւ պիտի մնայ յաւէտ հայկական ճշմարիտ տաղանդ մը, խնկալի յիշատակով: Եւ թէ եւս գերեզմանի լուծեան մէջ պիտի հանգչի, մենք, որքան ատեն որ այս աշխարհի պատկանինք, հաճոյքով պիտի ուղղենք մեր հոգիները Չուհաճեանի սիրուն երգերովը, որոնք զինքը անմահացնող մէյմէկ արձաններ են:

Կ. Ա.

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(ՄԵՐ ՄԱՍՆԱՌՈՐ ԵՂԹԱԿԵՐ)

Պուքէշ, 20 Մարտ

Շարժումի Թրդ. թիւին մէջ Արձագանգ վերնագրով գրութիւնը Վարդանանց տօնին առթիւ դանազան քաղաքներու մէջ տեղի ունեցած հանդէսները նկարագրելէ ետք, իրաւամբ կ'ակնարկէր Պուքէշի ուսուցչութեան ազգային հանդէսներու նկատմամբ ցոյց տուած անտարբերութեան:

Պ. Յովն. Պիպեճեան, տեղւոյս հայ վարժարանին ուսուցիչը, իր արժանապատուութիւնը վերաւորուած կը դադայ այդ յօդուածէն եւ կը պնդէ թէ՛ Պուքէշի մէջ կարելի չէ հայութիւնը վառ պահել, կառավարութեան բանեցուցած խտուրթի ներքինը (ն) պատճառով. եւ թէ իր նախորդներն ալ չեն յաջողած Պուքէշի հայոց ազգասիրական ջիղերը արթնցնել եւ այլն:

Ըստալի է որ մեր պատուելին այս կարգի թիւիւ առարկութիւններով ինքզինքը ջուրին երեսը հանել կը փորձէ:

Նայի որ ուսմանական կտտավարութիւնը, տեղւոյս լրագրութեան սանձարձակ ապստոթեան մէջ, ան-

տալեւս էր դալիս. եւ նրա խորունկ ու ինելացի աչերը ասում էին—Տես, ազնիւ մարդ պէտք է լինես. չընկնես:

Այլ եւս հօրս չի դիմեցի. սակայն որոշումս հաստատ էր. պէտք է գնայի Տիֆլիս: Մեր քաղաքում խեղդվում էի, դեկտեմբերի վերջին էր. պէտք էր ձմեռն այնտեղ լինել, մի քանի ամիս պատրաստվել ուսերկն լեզուից եւ աշխարհին զպրոց մտնել եւ բոլոր վրաս ծիծաղողներին ոտքի տակ տալ...

Բարեկամներիցս մի քանի բուրլի ճարեցի, եւ առանց հօրս նախօրք մի բան յայտնելու, դեկտեմբեր 29ին մի հայ պարոնի հետ ճանապարհ ընկայ զէպի Տիֆլիս: Ծանապարհից տարը, սոսկալի նեղութիւնները ինձ վրա ոչ մի ազդեցութիւն չէին գործում. ես թոյլում էի մեծ հաւատով իմ ուժերի եւ իմ բնորոշականութեան վրայ: Մեն մենակ, 18 տարեկան պատանի, նետել էի ինձ կեանքի ալեծուփ հոսանքի մէջ՝ օգտակար մարդ գտնուալ իմ երկրին, իմ ժողովրդին եւ պատուաւ որ անգամ հայ հասարակութեան:

Ճիշդ յունվարի մէկին հաւայ Տիֆլիս: Կովկասի մայրաքաղաքը սօճում էր նոր տարին, կեանքը եռում էր. նոր տարի էր սկսվում եւ իմ կեանքում, նոր ճանապարհ էր բացվում եւ ինձ համար, թէ ուր կը տանէր ինձ այդ ճանապարհը, դեռ ինձ համար որոշ չէր...

(Շարունակելի)

կարող է խիստ վարժուիլ հայերուն հետ, և արդէն այդ միտքն ալ չունի բարեխառնարար:

Հայերուն արդիւրած չէ ընկերութիւն մը ունենալ, հանդիսներ կազմակերպել, վարժարանին մէջ հայ պատմութիւնը դասախօսել, և կարծեմ որ մասնական կատարութիւնը չէ որ կատարէ Պ. Պ. Կոնստանտնուպոլսէն իրողութիւնը սա է թէ, մեր ուսուցիչը իրեն նշանաբան ընտրած ըլլալ կը թուի, «ամսականին սպասել և հետզհետէ մեզու հայութեան մը բեկորներուն վրայ Տրապիզոնի քաղցրիկ գիւնին խմել»: Որքան հոգ հայ պատմութիւնը և հայերէն լեզուն...

Պ. Պ. Կոնստանտնուպոլսէն իրողութիւնը հայութեան կենսական ուժով և ազգայնութեան ոգիով կարելի չէր եկած ժամանակ, և զարգանալու շաղկուն մէջ էր նախագ խղճամիտ ուսուցիչներու օրով: Կը յիշենք «Հայաստան, Արարատեան, Աղաթոնի մեծ սօնաշար և Հայրենասիրաց» ընկերութիւնները, կը յիշենք նաև «Վարդանանց սօնաշար» կատարուած շքեղ հանդիսները և զի չափազանցուած ազգային կեանք մը: Ասոնք յայտնի ազգայնացիներ էին հայուն գոյութեան: Մինչդեռ հիմա Պ. Պ. Կոնստանտնուպոլսէն իր 12 արտուած թոյլ և անապահար գործունէութեամբ, սանդուղիներէն գերեզման կատարող սեղանոս հայութիւնը:

Պատուելի, յանդիմանական քանի մը լեզուներէ փոխանակ վերաւորութեան, սթափէ այդ խոր թմբութեան, ձգէ գիւնին, շրտարները, և վերջապէս կը թուփան նուիրուած անձի մը անյարմար արարքը և պարտականութեանը ձայնին հետեւ:

Սափիա-Մուրի

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

«Խուզակ» վերջին թիւին մէջ կը կարդանք թէ կաթողիկոսական այցելու հովիւ Տ. Արսէն Վ. Վեհուտի Ռուսոյքի մէջ յետադիմական խառնամած քարոզները խօսելով բերանը սաստի՛յ աւերը է յառաջդիմասէր երիտասարդութեան դէմ: Բարեկամաբար զիտել կուտանք յիշեալ վեղարուորին որ հայ եկեղեցիին սեղանը, ուր չենք գիտես ինչ միջոցով յաջողեր է մազլիլ, ծխալաճառի խանութ մը չէ, ինչպէս կը կարծէ ինք, և պարտաւոր է իր նկարագրին անհարկի թափերը զսպել այդ նուիրական վայրէն մէջ:

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Պ. Վաղարշակ Մեսրոպեան, բնիկ հասցիւղի, շրջանաւոր «Եղբորական վարժարանի», որ մտն 4 տարիէ ի վեր կը գտնուի Բարիզ գեղազործութիւն և քիմիագիտութիւն սորվելու համար, անցեալ տարի Վիլ ժիւիֆի հիւանդանոցին և այս տարի ալ Մէնդ-Անի ապաստանարանին ներքին գեղազործարար անուանուեր է: Յաջողութիւն կը մաղթենք մեր զիտնական հայրենակցին:

Այս օրերս Բեդերսպոլի մէջ լոյս տեսեր է Մովսէս Խորենացիի «Հայոց պատմութեան» աշխարհարար թարգմանութիւնը, զոր կատարեր է Խորէն Եպիսկոպոսը:

Ստեփանէ: Ասիկա երկրորդ ու լրացած ապագութիւնն է:

«Վատմամբ» լրագիրը կը բէթէ Պարսկաստանի Ռեմիա քաղաքէն ասորիներու պատգամաւորութիւն մը Բեդերսպոլի գաւեր է յայտնելու որ 50 հազար ասորիներ կը փախազին ուղղափառութիւնը ընդունիլ:

Պուրբէշը հայ գաղթականութեան վայրուն անդամներէն Պ. Վահրամ Մամիկոնեան, առեւտրային ֆորքանի առեւտրական պաշտօններու ընկերութեան, ինչպէս նաև գոյատևանապետ Պուրբէշը առեւտրական պաշտօններու ընկերութեան, անդլիբէն լեզուի դասախօս անուանուեր է Պուրբէշը համալսարանին: Կը մաղթենք որ մեր համակրելի ազգակից աւելի բարձր պաշտօններու և արտոններու արժանանայ՝ հայ անունը պանծացնելով Քառմէն-Սիլվիի հայրենիքին մէջ:

Վանէն կը գրեն «Իւրան» գիւնի թէ այս տարի, ձմրան եղանակին, «հինգ հարիւր» հարսնիք տեղի ունեցեր են: Հայաստանէն եկած տխրահունչ կոծերուն մէջ տեղ միջոցութեան և իրենցի շէշ մը չի՞ դնիր այս լուր:

Պաքուի մէջ Ռոշիլաի խրմբակին պատկանած գործարանէն կաթողիկոսական այցելութեան առթիւ նուիրուած 25,000 ռուբլի 15,000ն ուղղակի Ս. Հայրուպետին մատուցուած է, իսկ 10,000 ռուբլին ուսու իշխանութեան յանձնուած է, 5,000ն հայ գաղթականներու և կարօտեալներու և 5,000ն ալ Պաքուի մէջ ուրիշ ազգէ ազգասներու բաշխելու համար:

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

—(—

Իշխան Գուրտոն Լուսինեան, իր քարտուղար Պարոն Հ. Աճառեանի ձեռնար խմբագրութեանս յղած է մէկ նմուշը այս բառարանին, զոր կը պատրաստէ երկար տանիէ ի վեր և որուն առաջին հատորը (A. B. C.) 650 հոստիւն մեծապիւր էջերէ բազկացած, մասերս հրատարակ պիտի ելլայ: Այս հոկայ բառարանը որ բացի ֆրանսերէն լեզուին սովորական բառերէն կը պարունակէ նաև պատկան բառեր, անծանօթ բոյսերու և կենդանիներու պատկերներ, նորայրի և նուագրեան բազմաբաներէն ետք կուգայ ճոխացնել հայ մատենագրութիւնը անհուն պակաս մը լեցնելով: Ասանկ հեղինակութեան մը ձեռնարակիւր համար ոչ միայն պէտք են բարձր Լուսինեան իշխանի խորին հմտութիւնն ու բազմամեայ գրական գործունէութիւնը, այլ և նիւթական մեծամեծ գոհողութիւններ, զորս յանձն առած է Գուրտոն իշխան:

Այսպիսի յատկութիւններով ժատուած գործ մը արդէն ինքնին այն աստիճան յանձնարարելի է որ աւելորդ կը սեղենք այդ միտքով երկար հրատարակ կարգալ հայ հասարակութեան:

—(—

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԵՊԵՆ

ՄԱԿԵՆԻ ԻՒՒ

Ամէն անգամ որ զոյսունք զայս, եւրոպական մամուլը առ թ կուտենայ զբաղելու մալ գոնական ինդրով: Հիմա շտաբով շանյելը որ «Թան» իր լուրը խմբագրականներէն մէկը շնորհէ Վեհուտիքի գործերուն: Վեհուտիքի խրմբագրականով մը խօսելով զարնան մեքնեցման և ա մակագունական ինդրին վերաբարձման մասին, կը բէթէ Քոստանդուպոլսի և Սիւլայի յաւալի դէպքերը պատճառ եղան որ յարաբերութիւնները ձգտուին Թուրքիոյ և Պուլկարիոյ միջև: ու կը յայտնուի «Կարծես մէկ մանրանկար վերջուկըստն է այն վայրագութիւններուն որոնք 1876ին կատարուի մեծ ձայնին շնորհով արթնցուցին եւրոպայի ինդրը, որոնք վերջապէս առաջ բերին մեծ պատերազմ մը և որոնց հետեւանք Պուլկարիան ստեղծուցաւ և Ռուս կայսրութիւնը յոշատեցաւ: Այսօր, ինչպէս ան առն, Բ. Գուրտոն տեղական քննութեան պէս բան մը ըրաւ բնականաբար եւրոպացիներու համար թէ այդ գաւառակներուն մէջ ամէն բան լաւագոյն վիճակ ունի, բատիչահներու էն սղկին իշխանութեանը ներքեւ: Այսօր, ինչպէս ան առն, Բ. Գուրտոն մեծ փութով կը պատրաստուի պա ահա կ'ն կուտի մը»:

Բայց, կըսէ, միւս կողմէ կան ապահովիչ պայմաններ. Ռուսիոյ ազգեցութիւնը խաղաղութիւնը պահպանելու համար, և Պուլկարիոյ այն համոզումը թէ մէկ հակառակորդի հետ գործ չպիտի ունենայ. Ռուսիան, երբեակ զինակցութեան յարած, սահմանադրուի կամրայնէ, և Սերպիան ակնդէտ կը սպասէ յարմար առթիւ վրէժը լուծերու Սլիվլուցային, որուն ախոր հետոյ Միլան նախորդ արքան՝ Սերպ բանակին զլուխ անցած է վերստին:

Ի ՄԵՐՎԻՍ ԵՒ ՍՊԻՆԻ

Այս երկու երկիրներուն մէջ հրդեհը պատրաստուելու վրայ է, քիչ քիչ, բայց յարատեւ: Աս երկուշարթի է որ «Մէյն» արկածին քննիչ մասնախումբը իր տեղեկագիրը սլուի Ներկայացնէր նախագահ Մաք Քիւնլիի, և առաջ խորհրդարանին: Ճինք կոչերու Գոնկըն, սակայն, կը շարունակէ իր մարտան սրշաւանքը, որուն թափը րիչ մը կտրեց ձերակոյտի անգամ Պ. Պարոն որ յայտարարեց թէ Ամերիկեան հանրապետութիւնը իր պատուին նախանձանդիւր ըլլալով հանգը, պիտի պահպանէ խաղաղութիւնը որքան առն որ հնար ըլլայ: Ատոր վրայ կուտի կէր ձերակոտականը որ Գուրտոն գացած էր քննութիւն մը Լա-

տարելու ի հաշիւ շովինական մամուլի, ճառ մը խօսեցաւ թշնամունելով սպանիացիներն ու գըրուատելով ապստամբները: Բացարկեց Գուրտի անձկալից վիճակը, և ըստ որ կարմիր-Խաչի ընկերութիւնը ապացոյց ունի թէ 425,000 քուպուցիներ անօթութեանէ մեռած են արդէն և 200 հազար ալ պիտի մեռնին: «Եթէ ապացոյցուի որ 250 ամիբիկացի նստալները զոյսած են «Մէյն» ընկղմումով, ալ իրաւարարութեան ինդրի չի մնար, ասիկա Միսյեալ-Վահանգըրու համար արժանապատուութեան նդիր է լիկ:» Պ. Կարլինէր կը խօսի քուպացիներուն կրած հարստահարութիւններուն վրայ և կըսէ թէ կրօնք ու մարդասիրութիւն վախճանը կը պահանջեն այս արիւնալի պատերազմը, և թէ ի թէ Սմերիկաի հետ միացում մը այսօր անկարելի ըլլայ, Գուրտի պատրէ անկախ հոշատի:

ՍԼԻՍՊՈՐԻ

Անդլիոյ նախարարապետին քաղաքական կեանքէ կամ պէթ արտաքին աշխարհագրութեան փշալից պաշտօնէն հեռանալուն լուրը հետզհետէ հատուածիւն կը գտնայ: «Իւրեքը Հէրլու» ըրարկեան ապագրութեան մէջ կը ծանուցուի թէ անցեալ երեքշաբթի նախարարական յեղափարծ գումարման մը մէջ Սալըսպըրի հրաժարման կարելուութեան խնդիր յարուցուեր է: Լորտը գործէ քաշուելէ յետոյ իրեն պատի յաջորդէ եղեր Տրվընշայրի գուրքը:

ՉԻՆ ԵՒ ՃԱՍՏԻՆ

Ճարն ալ պատերազմական պատրաստութեան տեղէն բռնուած է: Ինք ի հարկին պիտի ճակատի եւրոպայի միացեալ նախամբին որ կը գտնուի Մայրազոյն Արեւելքի շուրերուն մէջ: Ճարնա ան մամուլը անբաւական կը գտնէ նաատարմին արդի վիճակը, զոր կը պահանջէ չորացնել նորանոր ուժերով: Բանակը լաւ գրութեան մէջ է, գործօն 500,000 զինուոր կայ և պահեստ 2—300,000:

Անգլիական լրագիրները կըսեն թէ! ու մարքիլը Ճարնի վարչապետ կարգուելէն ի վեր Ճարնի և Չինի յարաբերութիւնները ազգեցած են: Ի ու մարքիլը խորհուրդ տուեր է Չինի՝ երկաթուղիներու արտօնութիւն տալ, օտար պանքաներու հաստատումը թոյլատրել և սեղմել փոխարքաներու անսահման իշխանութիւնը:

Չին եթէ մեքէ Ռուսիոյ պահանջումները, Բորք Արթուրի և Գա. Լիէն-Վանի նաւահանդիստելու մէջ ուսակեւն գրոջ պիտի պարզուի:

—(—

ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆՁ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

—)(—

Մեր վերջին թուով հրատարակած այն արտասուալից կոչը զոր հայր Շարմիան կուզէր քրիստոնէութեան գումար հարկերով Հայաստանի մեր սովորական իրաւունքներուն ողբազին վիճակին վրայ, արձագանգ գտած է Սոփիայի մէջ ուր անմիջապէս մասնախումբ մը կազմուած է հանգանակութիւն կատարելու ի նպատակ հայ սովորականներու:

Նոյն քաղաքն հրատարակուող ֆրանսերէն «Բուռնիէ տէ Պալքան» լրագիրը եւս իր կողմէն հանգանակութիւն բացած է միեւնոյն մարդասիրական նպատակին համար, ու իր միջոցով հաւաքուած գումարը պիտի յանձնէ յիշեալ մասնախումբին, որ հանգանակութեան ընդհանուր գումարը պիտի յղէ Հայրենիքի սովորական հայերուն վեհանձն բարեկամին հայր Շարմիանի, Թեղաւ փողոց, 20, Բարիկ:

«Շարժում»-ի խմբագրութիւնը եւս չկրնալով անապրբեր մնալ իր սովորական հայրենակիցներուն այս աղէտալի կացութեանը, կը փութայ հանգանակութեան էջ մը բանալ այսօրու ընդ, համոզուած թէ հայ հասարակութիւնը, հարուստ թէ աղքատ, իր լուսնան պիտի ածապարէ նուիրել իր եղբայրներու այս դառնագին վիճակին սիրովմանը:

Նուիրատուներու անունները հետզհետէ պիտի հրատարակենք «Շարժում»-ի մէջ գումարներով հանգերձ, զորս պիտի շնորհենք «Բուռնիէ տէ Պալքան»-ի միջոցով Սոփիայի հանգանակիչ մասնախումբին: «Շարժում»-ի կողմէ հաւաքուած գումարները հետզհետէ պիտի հրատարակուին նաեւ «Բուռնիէ տէ Պալքան»-ի մէջ:

Table with 2 columns: Name and Amount. Includes 'Ս. ՅՈՒՅԱԿ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ, Շարժում' 20 դր., 'Տեղաւ' 10, 'Ք. Քէրէտէճեան' 5, 'Լեւոն Մինասեան' 10, 'Գալուստ Մէշտուսճեան' 10, 'Ներսէս Փափագեան' 5, and a total of 60.

ԲՕԼԻԹԻԳԱ

Կ Ի Ր Ի Տ

«Ճիշմտեան» պաթոնը իշխութիւնէ կէտէ, Աւստրիա խարիճիէ նազըը պէտէյիւք տէվլէթլէր ինտինտէ պուլունան քէնտի սէֆիրլէրի վասըթասըյլա Աւստրիա հիւքիւմէթինին Կիրիտտէքի սաքէրինի Ապրիլ 15է գատար կէրի ալըպ, մէզքիւր ատատա եալընըլ լազըմ կէլտիկի վազըթ քէնտի քոնսուլտանտինի վըզայէ իթմէյէ քեաֆի օլաճագ գատար վափօր սաղլայաճազընը Էվրօքա գապինէլէրինէ պիլտիւրմիշ տիր:

Մէզքիւր կազէթա իլազէթէն տէյօր քի, Աւստրիա պու թէտպիլի իլէ Էվրօքա իթթիֆագընտան սաղա այրըլմայա նիյէթի եօգ աըր. եալընըլ աշիքեար կէօրիւնիյօր քի Աւստրիա հիւքիւմէթի Կիրիտ մէսէլէսի հագընտա իպթլտա իթթիլիալ էյլէտիլի բօլիթիղայը պրագմագատա աըր: Էվրօքա գապինէլէրի պիլ իթթիֆագլէ Կիրիտին հիւքիւմէթէ թէշքիլի, վէ պալուստու պիլր վալի թատերին հագընտա գարիպէն պիլր սէմէրէյէ վարմայաճագլարը կէօրիւնիյօր: Վալի իշիւն օլան թէքլիֆլէր հէք պիլր գապինէթօնըն ըրիպսընը գազանամաա: Քէշլա, Կիրիտտէ պուլունան Էվրօքա տօնանմալարըն սէրիան պիլր իշ կէօրիւպ կէրի տէօնմէլէրի մալիւմ տէյիլ տիր: Իշթէ պու սէպէպլէրտէն սօլայը աըր քի Աւստրիա քէնտի սաքէրինի կէրի չէքմէք իսթէյօր:

Կիրիտ օսմանը քօմիսէրի ձէվատ փաշա Ագ տէնիլը ըուս տօնանմաաընըն եէնի գօմանտանը ամիրալ Աքրիտօֆա զիյարէթ իտուպ անընլա ուղուն պիլր միւլազաթտա պուլունմըլ տըր: Պու միւլազաթ ըում կազէթալարընտա շու վէճլէ նագլ օլընըյօր:

Ձէվատ փաշա քրէնս Եօրկիոսըն վալի թային օլընմասընտան նէշէթ իտէճէք թէշիքէլէրի կէօսթէրտիկինտէ, Ամիրալ պու թէշիքէլէրին սըրֆ իւշլալի օլտըղընը սէօյլէյիպ ատանըն պիլր չօք իսլամ պէյլէրին քրէնս Եօրկիոսը պաշագ վալիլէրտէն թէրճիհ իթտիքլէրինի վէ եալընըլ Եօրկիոսըն թայինի իլէ ատանըն գարըըլըլըլ նիհայէթ պուլաճազընա վէ իսլամ վէ խրիսթիյան պէյնինտէ միւլալէնէ իլէրի կէլէճէկինէ գանի օլաըղլարընը պէյան էյլէմիշ տիր: Ձէվատ փաշա Ամիրալըն պէյան իթտիկի էֆքեարըն սօղրուլըլընա ամին տէյէմէյիպ պու պապտէ ամիրալարա պիլր ըաքօրթօ վէրէճէք իմիշ:

ԹԻԻՐԻԿԻՆ ՎԷ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Սօֆեա Օսմանը քօմիսէրի Նուսուհի պէյ պալզան կազէթալարընա Պուլկարիա վէ թիւրքիա միւնասէպաթըն հագընտա կէօրիւլէն ֆէնա հավատիսլէրտէն միւթէտիր օլուպ «Բուռնիէ տէ Պալքան» կազէթասընա պիլր թահրիւրաթը ըէսմիլէ վէրմիշ վէ թիւրքիա վէ Պուլկարիա պէյնինտէ միւնասէպաթըն էվլէլէրի կիպի սօթմանէ օլաըղընը իսպաթ իթմիշ տիր:

Տիկէր թարաֆտան «Աման» Պալզանիք թէլէկրաֆը Մակէթոնիա սինօըընտա Օսմանը սաքէրլէրին թօրլանմասընա տայիր հավատիս վէրմէյի տէվամ իտէր: Պուլկարիա հարպիլէ նէպարէթի տալի Պուլկար օրտուսընըն հազըրլանմասընը թէկլիլ իտի-

յօր իտէ տէ պիլր գաշ կազէթալար Մակէթոնիա հուտուտընտա Պուլկար թապուրլարըն հազըրլանմասընա տայիր շախալար տէրճ իտիյօրլար:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

—)(—

Պապը Ալի Վօլտա իքի սաքէր թարաֆընտան էօլտիւրիւմ միւշ օլան գաթօլիք բահիպին գաթիլլէրինի պուլուպ շէտիտէն ճէգալանտըրմագ իշիւն, Էքի թիւրք հաքիմտէն վէ պիլր Բուսան միւթէշէքքիլ պիլր գօմիւսէօնըն Սթանպօլտան Վօլտա միւֆարէգէթ իթտիկիլինի պէյան իթմիշ տիր:

Իէսալիանըն եագընտա պօշալաճաղը հավատիս կէրէք Ըսթանպօլ էհալիսինտէ կէրէք թէսալիա օրտուսընտա կէզմէքտէ տիր: Թիճարէթ սօնանմասընըն 10,000 սաքէր նագլ իտէպիլիւր սօղուլ վափօրլարը թայֆալար գապուլ իտուպ Եօլա չըքմայա հազըրլանմըլլար ըմըլ: Պուլար թէսալիայը պօշալթմայա գուլլանըլաճագլար տըր:

Սատրագամ վէ Պուլկար մասլահաթիկըզարը Մ. Մարքով պէյնինտէ հասըլ օլան սուրէթը թէսվիլէ սէմէրէսի օլարագ Պուլկար կազէթալարընտա թիւրքիա վէ Պուլկարիա պէյնինտէ միւճատէլէյէ հիշ պիլր սէպէպ օլմատըղընը թէքլիպ իտէր թահրիւրաթը ըսմիլէլէր տէրճ օլընմագլար ըմըլ:

Ֆրանսա, իթալիա վէ ինկիլթէրրա սէֆիրլէրի Սթանպօլ էրմէնի զըրկընլարը զէմանընտա սօյալմըլ օլան քէնտի թէպատարըն զիյանլարընը թալէպ իթմէք իշիւն Պապը Ալիլէ պիլրէր նօթա վէրմիշլէր տիր: Լազըմ օլան մէպլալ թազմիլնոթը հարպիլտէն թէտիլէ օլընմագլ ըմըլ:

Ամէրիկա «Մէյն» վափօրընըն պաթմասը սէպէպլէրինի թահրիլք իտէն գօմիւսէն ըաքօրթօլարը մէզքիւր զըրիլընըն խարիճի սէպէպլէրլէ զարգ օլտըղընը պէյան իտուպ, մէտուլիյէթ քիմտէ օլաըղընը կէօսթէրէմէյօրլար:

Գրալ Եօրկիոսը գաթլ իթմէյէ թէշէպպլու իթմէսի իշիւն սէրտէսթ օլընան Գարտիցի իսթիւնտէ պուլունան տինամիթ պօմպասընըն Մ. Տէլիեանիլէ թային օլաըղընը, վէ էկէր գրալը գաթլ իթմէյէ մուվաֆֆագ օլտայըրը մէզքիւր պօմպայը Մ. Տէլիեանիլին էվինէ աթմագըղընը պէյան իթմիշ տիր: Գարտիցիին միւտաֆադընը հիշ պիլր ալօգաթ տէրիւհտէ իթմէտիկիլինտէն, մահքէմէ քէնտի թարաֆընտան պիլրիսինի թային իթմիշ տիր:

Վիրիցյատա Քեաղիմ իսմիլնտէ պիլր թիւրքին գաթլիլնտէն սօլայը, Իսկիլուպ մահքէմէսի պիլր պուլկարըն իտամ ճէզասընա, օն պիլր պուլկարըն մահպուսիլէթի-

նէ վէ տիկէր 15 պուլկարըն զըլապէն մալ վէ միւլքլէրինին զապթ օլընմասընա գարար վէրմիշ տիր:

Ֆրանսա մէճլի ը մէպուսանընտա, Մ. Պառոն Ֆրանսա հիւքիւմէթինին պինլէրճէ էրմէնիլէրին զըրկընընը վէ բուվարըն խարապիլէթինի միւսատէ իթմիշ օլաըղը իշիւն թազպիլ վէ թայիլ (վար զարնել) իթմիշ տիր:

Իւլտօրգտան պիլտիլիլտիկինէ կէօրէ, հիւքիւմէթ էկէր շիմտիլէ գատար իթմէմիշ իտէ եագընէն Սպանիա հիւքիւմէթինէ Քուպա ատասընըն թէհամիլ օլընմագ պիլր հալ քէսպ իթմիշ օլաըղընը պիլտիլրէճէք տիր:

ՊՕՐՍԱ

Վառնա 18 Մարտ

ՊՈՒՂՏԱՅ Վակօն, լիպրա 47—51, հէքթօլ 8.40—9.15 ֆրանք Արապա, լիպրա 47—55 հէքթօլ 8—10.60 ֆրանք

ԱՐԲԱ Լիպրա 38—40 հէքթօլ 4.30—4.80 ֆրանք

ՄՐԱՐ Վակօն, լիպրա 37—38 հէքթօլ 6.10—6.20 ֆրանք Արապա, լիպրա 57—60 հէքթօլ 6.20—6.40 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ 100 օգգասը 19—25 ֆրանք մալա կէօրէ

Առապա մուսմէլէսի նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր. իւնտէ 2—3 վակօն վէ 30—40 արապա պուզտայ, 10—15 արապա արբա, 4—5 վակօն վէ 7—8 արապա մըսըր կէլմէքտէ տիր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայ Կաղրակաւորներն ի Հնդկաստան

Հնդկաստանի հայ գաղութի մասին պատմական եւ ազգագրական խիստ շահեկան տեղեկութիւններ պարունակող սոյն անգլիերէն երկասիրութիւնը, զոր հեղինակը, Տիար Մեսրոպ Սէթեանց Կալկաթայէն զրկած է մեզ, կարճէ որ ամէն անգլիագէտ ազգայիններու թանգարանին մէջ պտնուի:

ԳԻՆ Ե ՇԻԼԻՆ

Կեղրոնտտիղի վառնա Ապտիւրահման մզկիթի գէմը, Ա. Ջարպահանէլեան Հայկական Գրատան մէջ:

ՏՊԱՐԱՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրուի, հարսանեկան հարախրագիր, մահազգ, լնչպէս նաեւ պրօշիւռներ:

Գիներն յոյժ գլուրամտշիլի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին:

Отговорникъ: X. Тахмисявъ Печатница «Взаимность» Варна.